



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ**

-- փետրվարի 2018 թվականի №---Ա  
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի №105Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ  
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) 2018 թվականի փետրվարի 14-ին «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով մեկ տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №105Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0601 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0601 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը.

բ) Ընկերությունը հայտնել է, որ կառուցման աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելուն խոչընդոտել է բանկի կողմից ֆինանսավորման ուշացումը.

գ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 39-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի.

ե) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության

պաշտոնական կայքում տեղակայված տեղեկատվության համաձայն՝ 2017 թվականի հուլիսի 31-ին տեղի է ունեցել Ընկերության մասնակցների փոփոխություն՝ Ընկերության 50 տոկոս բաժնեմասի օտարամաբ, ինչի վերաբերյալ Ընկերությունը «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետով սահմանված կարգով և ժամկետում չի տեղեկացրել Հանձնաժողովին.

զ) Հանձնաժողովը 2018 թվականի փետրվարի 19-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով.

է) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի՝

- 1) 2-րդ կետի համաձայն՝ գործունեության լիցենզիա ունեցող որևէ անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայտերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել նույն կամ մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր,
- 2) 4-րդ կետի համաձայն՝ փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքներն իրականացնում են առանց Հանձնաժողովի թույլտվության (համաձայնության), եթե այդ անձինք էներգետիկայի բնագավառում չունեն գործունեության այլ տեսակի լիցենզիա կամ այլ կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա: Փոքր հիդրոէլեկտրակայաններում և էներգիայի վերականգնվող այլ աղբյուրների կիրառմամբ գործող կայաններում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության լիցենզիա ունեցող անձինք սույն հոդվածի 1-3-րդ կետերում նշված գործարքների իրականացման օրվանից 15 աշխատանքային օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնում են Հանձնաժողովին.

ը) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը կատարված խախտումը պատճառաբանել է որպես օրենքի չիմացության հետևանք և հայցել է Հանձնաժողովի ներողամտությունը.

թ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետը՝ 50 տոկոս բաժնեմասի վաճառքի գործարքի վերաբերյալ գրավոր չի տեղեկացրել Հանձնաժողովին, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Վեց ամիս ժամկետով երկարաձգել ԼԷ №0601 լիցենզիայով ամրագրված «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ Հանձնաժողովի 2017 թվականի մարտի 29-ի «ՔԼԻՆ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №105Ա որոշման մեջ «մինչև 2018 թվականի մարտի 31-ը» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի սեպտեմբերի 30-ը» բառերով:
2. «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
3. Ընկերությանը՝ ԼԷ №0601 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «ՎԱՅՈՑ ԱՐԵՎ» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
  - 1) մեկամսյա ժամկետում «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի նոյեմբերի 7-ի №01-1158 գրությամբ ներկայացված №174406979 բանկային երաշխիքի համաձայն երաշխավորված երկու միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար դրամ գումարից մեկ միլիոն երկու հարյուր քառասուներկու հազար դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
  - 2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել երկու միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար դրամ գումարի երաշխիք՝ մինչև 2018 թվականի նոյեմբերի 14-ը գործողության ժամկետով:

4. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի մարտի 31-ից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան  
-- փետրվարի 2018թ.